Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025-ՇՍ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 18. Շիրակ -2 (Արթիկ, Գյումրի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 18.12.2025թ |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Շիրակի մարզի Գյումրի և Արթիկ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 6 դեպքի վարում (վերափաստագրման գործընթացի կազմակերպում ՄՍԾՏԿ-ում. անվճար բուժհետազոտության կազմակերպում, աջակցող միջոցների ձեռքբերում. կենսաթոշակի եւ նպաստի բանկային համակարգով ստացման կազմակերպում):
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 6 միջոցառում (մասնակիցների թիվ 15)՝ «Տարիքն իմ ուժն է. ոչ թե սահմանը», Տարեցների միջազգային օր (2 անգամ), միջոցառում կազմակերպված «Ճանապարհներ առանց սահմանների» միջազգային ասոցիացիայի կողմից, այց «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան (2 անգամ), Շահառուի ծննդյան տոնի նշում, Ամանոր (2 անգամ):
  Հաշվետու ժամանակահատվածում հոգեբանական խորհրդատվություն է ստացել թվով 3 շահառու:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունային է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 19 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 5 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 3 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 2 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 2 շահառուի համար կատարվել է երակային ներարկում (շարունակական): Թվով 14 շահառուի համար կատարվել են դեղորայքային գնումներ, 1 շահառուի համար կատարվել է վիրակապում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

- Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տարեցների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.li/lwnqld, , https://surl.li/r djjg, https://surl.li/gndslh),
- «Տարիքն իմ ուժն է, ոչ թե սահմանը» միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/eghesg),
- Այց «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.l /hggvym, https://surl.li/brytkt),
- միջոցառում կազմակերպված «Ծաղրածուներ առանց սահմանների» միջազգային ասոցիացիայի կողմից (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.lu/jmfefj, https://surl.li/ukmmy),
- Այց Գյումրու մշակութային ժառանգությունը ներկայացնող տուն-թանգարաններ (տե՛ս հետևյալ հղումով՝ https://surl.lt/cdekcc),
- Ամանոր (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://surl.li/psdowp, https://surli.cc/quwymq):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները** (կցելով նաև շահառուների ցուցակը):

**Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.**
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**
Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողն ու հոգեբանը մասնակցել են.

- ✓ «Էմիլի Արեգակ» կենտրոնի կողմից կազմակերպած «Անցած ճանապարհ եւ խոստումնալից վաղը» միջոցառմանը:
- ✓ «Ագաթ» ՀԿ-ի կողմից կազմակերպած Գյումրիի առաջին ներառականության պատի ստեղծման միջոցառմանը:
- ✓ «Ալցհայմերի խնամք Հայաստան» կազմակերպության հիմնադրման ութամյակին նվիրված միջոցառմանը:
- ✓ PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարական մոտեցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում. ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:
- ✓ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից իրականացրած ֆոկուս խմբային քննարկմանը:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 76/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 67 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 10 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 9 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 9 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 65 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 12<br>Բ – 63 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 15 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 27 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 3 |

Կազմակերպության ղեկավար Ե. Միքթարյան «18» 12. 2025թ